ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆԻՑ ԲԽՈՂ 2023-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 1871-Լ ՈՐՈՇՄԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

NN	Գործողություն	Միջոցառման անվանումը	Կատարված աշխատանք
1.	Գործողություն 1.20.	Զարգացնել նվերների ընդունման սահմանափակումների իրացման կառուցակարգերը	Արդարադատության նախարարության կողմից մշակվել է «Պետական գույքի կառավարման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Պետական արարողակարգի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը (այսուհետ՝ Նախագծերի փաթեթ): Նախագծերի փաթեթը 2023 թվականի մարտի 12-ին, իսկ այնուհետև հուլիսի 18-ին դրվել է հանրային քննարկման, ինչպես նաև ներկայացվել է շահագրգիռ մարմիններին կարծիքի: Լրամշակված նախագծերի փաթեթը Կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 19-ի N 1782-Ա որոշմամբ հավանության է արժանացել, սահմանված կարգով ներկայացվել է Ազգային ժողով, 2023 թվականի դեկտեմբերի 11-ին ընդունվել է առաջին ընթերցմամբ, իսկ 2024 թվականի մարտի 6-ին Ազգային ժողովի պետական և իրավական հարցերի մշտական հանձնաժողովի 06.03.2024թ. նիստում երկրորդ ընթերցմամբ հանձնաժողովի դրական եզրակացությունն է ստացել: Նախագծերը առաջիկայում կքննարկվեն Ազգային ժողովում երկրորդ ընթերցման ընթացակարգով: Նախագծերի փաթեթով առաջարկվում է սահմանել հանրային ծառայողների և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից ստացված և «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 29-րդ հոդվածի 6-րդ և 9-րդ մասերով պետական սեփականություն դարձած գույքի տնօրինման հետ կապված կարգավորումներ՝

			նախատեսելով, մասնավորապես, այդ նվերները հանրային ծառայողի կամ համապատասխան պետական մարմնի օգտագործմանը թողնելու, առանձին դեպքերում՝ պետական կամ համայնքային թանգարաններին հանձնելու, հրապարակային սակարկություններով կամ նվիրաբերելու եղանակով իրացնելու, շուտ փչացող գույքի իրացման եղանակների վերաբերյալ կարգավորումներ: Միևնույն ժամանակ, Նախագծերի փաթեթով առաջարկվում է վերոնշյալ խումբ նվերների տնօրինման լիազորությամբ, որպես ընդհանուր կանոն, օժտել Պետական գույքի կառավարման կոմիտեին: Միաժամանակ, Հանրապետության նախագահի, Վարչապետի, Ազգային ժողովի նախագահի, փոխվարչապետերի, նախարարների և նախարարների տեղակալների, պատգամավորական պատվիրակությունների, Կառավարությանը և վարչապետին ենթակա մարմինների ղեկավարների և նրանց տեղակալների կողմից ստացված նվերների հաշվառման, ինչպես նաև Օրենքի 29-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով Հայաստանի Հանրապետության սեփականություն դարձող նվերների՝ «Պետական գույքի կառավարման մասին» օրենքով սահմանված եղանակներով տնօրինման վերաբերյալ եզրակացություն ներկայացնելու լիազորությունը վերապահել Պետական արարողակարգի ծառայությանը: Նախագծերի փաթեթով առաջարկվում է նաև հստակեցնել Օրենքով թույլատրելի համարվող նվերների շրջանակը՝ դրանց շարքում նախատեսելով նաև որպես պարգևատրում կամ պետական պարգև տրամադրվող գույքը, այդ թվում՝ Վարչապետի կողմից որպես պարգևատրում տրված զենքը: Այսպիսով, Նախագծերի փաթեթն ուղղված է պետական սեփականություն դարձած նվերների տնօրինման արդյունավետ գործիքակազմեր ներդնելուն, պետության սեփականություն դարձած նվերների տնօրինման ընթացակարգի միասնականությունը և կանխատեսելիությունը, պետական սեփականություն հանդիսացող գույքի միասնական սկզբունքներով, նպատակային և արդյունավետ կառավարումն ու տնօրինումը ապահովելուն: Միաժամանակ, 2024 թվականի հունվարի 1-ին ուժի մեջ է մտել Կոռուպցիայի

			կանխարգելման հանձնաժողովի 2023 թվականի դեկտեմբերի 22-ի «Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնեական պարտականությունների իրականացման կապակցությամբ ստացված նվերների հաշվառման, հանձնման և գնահատման, նվերների հաշվառման ռեեստրի վարման և ներկայացված տվյալներում փոփոխությունների կատարման, նվերների ընդունման սահմանափակումների խախտման դեպքերի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման կարգերը, ինչպես նաեվ ռեեստրում լրացման և հրապարակման ենթակա տվյալների ցանկերը սահմանելու մասին» N 01-Ն որոշումը: Սույն որոշման շրջանակներում սահմանվում են հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնեական պարտականությունների իրականացման կապակցությամբ ստացված նվերների հաշվառման, հանձնման և գնահատման, պաշտոնեական պարտականությունների իրականացման կապակցությամբ ստացված նվերների հաշվառման ռեեստրի վարման և ներկայացված տվյալներում փոփոխությունների կատարման, պաշտոնեական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ընդունման սահմանափակումների խախտման դեպքերի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման կարգերը, ինչպես նաև պաշտոնեական պարտականությունների իրականացման կապակցությամբ ստացված նվերների հաշվառման ռեեստրում լրացման և հրապարակման ենթակա տվյալների ցանկերը: Հարկ է նշել, որ մինչև նվերների հաշվառման էլեկտրոնային ռեեստրի ստեղծումը, հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները համապատասխան նվերների հաշվառման ձևաթղթերը, վերոգրյալ որոշմամբ սահմանված կարգով և ժամկետներում, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով են ներկայացնում Հանձնաժողովի կայքում հասանելի էլեկտրոնային տարբերակով: Ձևաթղթի էլեկտրոնային տարբերակը լրացնելուց և հանձնելուց հետո հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային

			ծառայողները Հանձնաժողով են ուղարկում նաև արտատպված ձևաթուղթը և կից նյութերը՝ իրենց ստորագրությամբ:
2.	Գործողություն 1.12, Գործողություն 1.13	1.12 Ընդլայնել բարեվարքության ուսումնասիրության ենթակա պաշտոնների ցանկը: 1.13 Տարանջատել բարեվարքության ուսումնասիրությունը հանրային պաշտոնում նշանակման կամ առաջխաղացման համար և ընթացիկ բարեվարքության ուսումնասիրությունը (շրջանակը, մեխանիզմները)	ՀՀ արդարադատության նախարարության կողմից 2023 թվականի մայիսի 19-ին հանրային քննարկման է դրվել և շահագրգիռ մարմինների կարծիքին է ներկայացվել «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի և հարակից օրենքների նախագծերը: Նախագծերի ընդունմամբ առաջարկվում է ներդնել բարեվարքության պարբերական ստուգման մեխանիզմներ դատավորների, դատախազների և քննիչների համար: Միաժամանակ, առաջարկվում է ներդնել կառուցակարգեր Քննչական կոմիտեի ինքնավար պաշտոններում նշանակման ենթակա թեկնածուների և առաջխաղացման ենթակա ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց, ինչպես նաև Հակակոռուպցիոն կոմիտեում առաջխաղացման ենթակա ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց համար: Նշվածը ապահովելու է վերոգրյալ պաշտոնատար անձանց գործունեությունը պարբերաբար ուսումնասիրելու հնարավորություն՝ կոռուպցիոն երևույթներին ներգրավվածությունը բացահայտելու տեսանկյունից: Հաշվի առնելով նախագծում քննարկվող հարցերի շրջանակը՝ 2023 թվականի հունիսի 7-ին և օգոստոսի 11-ին ՀՀ արդարադատության նախարարությունում շահագրգիռ մարմինների հետ իրականացվել են քննարկումներ, որոնց արդյունքում նախագծերը լրամշակվել են: Իրականացված քննարկումների հիման վրա լրամշակված նախագծերը 2023 թվականի դեկտեմբերի 14-ին արժանացել են Կառավարության հավանությանը և ներկայացվել են Ազգային Ժողով: Նախագծերը 2023 թվականի դեկտեմբերի 22-ին Ազգային ժողովի կողմից ընդունվել է առաջին ընթերցմամբ և առաջիկայում կքննարկվեն Ազգային ժողովում երկրորդ ընթերցման ընթացակարգով:
3.	Գործողություն 1.18	Կատարելագործել վարքագծի կանոնագրքերը՝ հիմք ընդունելով ԿԿՀ հաստատած տիպային	Սույն գործողության շրջանակներում նախատեսվում է նաև սահմանել պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական

		կանոնները, և դրանց կիրարկման կառուցակարգերը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում	խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագիրքը: Վերոգրյալ միջոցառման շրջանակներում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից 2024 թվականի փետրվարի 6-ին ընդունվել է «Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագիրքը սահմանելու մասին» N 02-Ն որոշումը: Սույն որոշմամբ սահմանվել է պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնները, որոնք ի թիվս այլնի ներառում են «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված վարքագծի սկզբունքները, շահերի բախման, նվերներ ընդունելու սահմանափակումների վերաբերյալ կարգավորումները և այլն: